Հիմնադրամի պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	Մերժման հիմքեր	Իրավական ակտեր
Հիմնադրամ	Հիմնադրամի պետական գրանցման մերժման հիմքերն են. ***1) հիմնադրամի կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը,*** մասնավորապես հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ չի հաստատվել հիմնադրամի կանոնադրությունը, կամ հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ նշանակվել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, նշանակվել է գործադիր մարմնի ղեկավար և այլն. ***2) հիմնադրամի անվանումը համընկնում է նախկինում գրանցված այլ հիմնադրամի անվանմանը կամ, եթե հիմնադրամի անվանումը ցուցում չի պարունակում հիմնադրամի գործունեության բնույթի մասին.*** ***3) օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը չներկայացնելը.*** ***4) ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ կանոնադրության) անհամապատասխանությունն օրենքին կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին,*** մասնավորապես ներկայացված կանոնադրությամբ սահմանված չեն հիմնադրամի շահառուների խմբերը, նպատակները, կամ կանոնադրությամբ սահմանված չէ հոգաբարձուների խորհրդի քանակական կազմը, հոգաբարձուների խորհրդի ձևավորման կարգը և այլն. ***5) հիմնադրամի չկայացած համարվելը,*** մասնավորապես հիմնադրամ հիմնադրելու մասին որոշման ընդունման պահից 2 ամսվա ընթացքում հիմնադրամը սահմանված կարգով չի դիմել պետական գրանցման:	«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 17-րդ հոդվածներ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին կետ

Հիմնադրամի փոփոխությունների պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	Մերժման հիմքեր	Իրավական ակտեր
Հիմնադրամ	Հիմնադրամի փոփոխությունների պետական գրանցման մերժման հիմքերն են. ***1) հիմնադրամի փոփոխությունների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված կարգի խախտումը,*** մասնավորապես, հիմնադրամի կանոնադրությունում կատարված փոփոխությունները և լրացումները կատարված չեն իրավասու մարմնի կողմից, կամ կանոնադրության փոփոխությունը հաստատված չէ իրավասու մարմնի որոշմամբ և այլն. ***2) պետական գրանցման համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը չներկայացնելը.*** ***3) ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ կանոնադրության փոփոխությունների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության) անհամապատասխանությունն օրենքին կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին,*** մասնավորապես հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը չի պարունակում նիստի օրակարգը, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները, կամ հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը չեն ստորագրել նիստին մասնակցած հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, կամ ներկայացված նոր խմբագրությամբ կանոնադրությամբ սահմանված հիմնադրամի նպատակները կամ շահառուների խմբերը չեն համապատասխանում հիմնադրամի պետական գրանցում ստացած կանոնադրությամբ սահմանված հիմնադրամի նպատակներին կամ շահառուների խմբերին և բացակայում նշված փոփոխությունները կատարելու մասին իրավասու մարմնի որոշումը (դատարանի որոշում/վճիռ) և այլն. ***4) առկա է իրավաբանական անձի փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ.*** ***5) Հիմնադրամի անվանման փոփոխության դեպքում՝***	«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդված «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին կետ

	հիմնադրամի նոր անվանումը համընկնում է նախկինում գրանցված այլ հիմնադրամի անվանմանը կամ, եթե հիմնադրամի նոր անվանումը ցուցում չի պարունակում հիմնադրամի գործունեության բնույթի մասին:	

Հիմնադրամի լուծարման գործընթացում գտնվելու պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	**Մերժման հիմքեր**	**Իրավական ակտեր**
Հիմնադրամ	Հիմնադրամի լուծարման գործընթացում գտնվելու պետական գրանցման մերժման հիմքերն են. ***1) լուծարման՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգի խախտումը,*** մասնավորապես դատարանի կողմից հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում որոշում չի ընդունվել լուծարման հանձնաժողով կամ (լուծարող) նշանակելու, և (կամ) ընդունած որոշմամբ չի սահմանվել լուծարման կարգը և ժամկետները և այլն. ***2) օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը չներկայացնելը.*** ***3) ներկայացված փաստաթղթերի ամբողջական չլինելը կամ օրենքի պահանջներին չհամապատասխանելը,*** մասնավերապես հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը չի պարունակում նիստի օրակարգը, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները, կամ հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը չեն ստորագրել նիստին մասնակցած հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, ***4) հիմնադրամի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար.***	«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մաս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ և 68-րդ հոդվածի 2-րդ մասեր

Հիմնադրամի լուծարման պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	Մերժման հիմքեր	Իրավական ակտեր
Հիմնադրամ	Հիմնադրամի լուծարման պետական գրանցման մերժման հիմքերն են. ***1) Հիմնադրամի լուծարման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը.*** Մասնավորապես լուծարման հաշվեկշիռը չի հաստատվել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և (կամ) դադարանի կողմից և այլն: ***2) սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը.*** ***3) ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքի պահանջներին.*** մասնավերապես հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը չի պարունակում նիստի օրակարգը, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները, կամ հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը չեն ստորագրել նիստին մասնակցած հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, կամ ներկայացված լուծարման հաշվեկշիռը չի պարունակում դրույթներ այն հաստատված լինելու մասին: ***4) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հարցումներին հիմնադրամի նկատմամբ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հարուցված և չավարտված վարչական վարույթի մասին կամ հիմնադրամի՝ հանձնաժողովի նկատմամբ պարտավորությունների առկայության մասին կամ պետական բյուջեի նկատմամբ հարկերի, տուրքերի կամ սոցիալական ապահովագրության գծով պարտավորությունների առկայության, դրանց չափի և ծագման հիմքերի մասին հստակ պատասխան ստանալը***:	«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածներ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մաս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մաս

	Իրավաբանական անձանց փոփոխությունների պետական գրանցման մերժման հիմք է նաև իրավաբանական անձանց կողմից փոփոխությունների պետական գրանցման համար դիմելիս «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին 19.03.2012 թվականի ՀՕ-127-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը չկատարելը. «5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գրանցված իրավաբանական անձինք փոփոխությունների՝ սույն օրենքով նախատեսված գրանցման համար դիմելիս պարտավոր են գործակալություն ներկայացնել նաև սույն օրենքից բխող, սակայն նախկինում չներկայացված տեղեկատվությունը, որի չներկայացնելը հիմք է իրավաբանական անձի փոփոխությունների պետական գրանցումը մերժելու համար:»:	«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին 19.03.2012 թվականի ՀՕ-127-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մաս